ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/65-1

ք. Երևան «28» սեպտեմբերի 2018թ.

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և Դավիթ Քոչարյան ԱՁ-ն, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պոլիգրաֆիական տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 381 900 (երեք հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն	Դավիթ Քոչարյան ԱՁ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ք. ԵՐԵՎԱՆ. Արգիշտի փ 11/3շ, 32բն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 37488199
Գլխավոր քարտուղար՝	
Վ. Օհանյան	Դ. Քոչարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«28» սեպտեմբերի 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/65-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	79821200/1	Տես Հավելված 1.1	հատ	25 000	50	ՀՀ քաղաքացիական դատավարության դրամական փոխհատուցում՝ 4,Ա.Միկոյան 109/8	2018թ. 3-րդ եռամսյակ
2	79821200/2		հատ	14 000	50		
3	79821200/3		հատ	90 000	240		
4	79821200/5		հատ	22 000	100		
5	79821200/6		հատ	58 000	270		
6	79821200/7		հատ	25 000	50		
7	79821200/8		հատ	14 000	50		
11	79821200/14		հատ	17 500	500		
12	79821200/15		հատ	7 500	500		
15	79821200/18		հատ	20 000	500		
18	79821200/22		հատ	13 900	1390		
26	79821200/30		հատ	40 000	800		
27	79821200/31		հատ	35 000	70		

*Ծառայության մատուցման ժամկետը պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը:

Պատվիրատու

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

Վ. Օհանյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող

Դավիթ Քոչարյան ԱՁ
ք. ԵՐԵՎԱՆ. Արգիշտի փ 11/32, 32բն
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 37488199

Դ. Քոչարյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.1
«28» սեպտեմբերի 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/65-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը /հատկանիշները/	Չափման միավորը	Քանակը
Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն, այդ թվում՝				
1	Հրշեջ փրկարարական ջոկատի մեկնումների գրանցման մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	50
2	Հրդեհների հաշվառման քարտերի գրանցման մատյան	50 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 3 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	50
3	ՀՓՋ և ՀՀՋ ծառայության մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի բովանդակությունից, չորրորդ և հինգերորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով 1,5-2 սմ լայնությամբ, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	240
4	Հրշեջ փրկարարական ավտոմեքենաների տեխսպասարկումների մատյան	50 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	100
5	Դասամատյաններ	30 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ երկու 19,5x29,7 մասից՝ ձախակողմյան ծալվածքով և ներսում անձնակազմի հաշվառման համար նախատեսված աղյուսակ, տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 3 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	270
6	Հրշեջ փրկարարական ջոկատի հեռախոսագրերի մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	50
7	Հրշեջ փրկարարական ջոկատի ռադիոկապի վիճակի ստուգման մատյան	50 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 3 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	50

	Ծառայողական ցուցակ/ԿՎ/	6 թերթից, չափը՝ 20,6x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում	հատ	500
12	Հաշվառման անձնական թերթիկ/ԿՎ/	A3 ֆորմատի տպագրական թուղթ բացված վիճակում, ծալված վիճակում համապատասխանում է A4 ֆորմատի չափին և բաղկացած է 2 թերթից, չափը՝ 21,0x29,7 սմ,մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում:	հատ	500
15	Թեստի բլանկ/ԿՎ//ՀՀ ԱԻՆ փրկարար. ծառայողների թեստավորման համար/	Թեստի բլանկը բաղկացած է առաջին և երկրորդ՝ պատճենահանող A4 ձևաչափի (210x297մմ) թղթերից, կոնակը սոսնձված: Թերթիկի վերևից 6,5 սմ դեպի ներքև հատվածը ծակատվում է՝ կտրելը հեշտացնելու համար: Կտրվող երկու մասերի վերին աջ հատվածներում զետեղվում են գաղտնագրի ուղղանկյուն 0,8x3,1 սմ չափի վանդակներ, որոնք պատվում եմ անթափանց նյութով և ծածկվում կպչուն, թափանցիկ ժապավենով: Թերթիկի հիմնական հատվածում մինչև 50 հարց ու պատասխանի ամփոփիչ աղյուսակն է, շրջանակված թավ գծերով, ներսում նրբագծեր	հատ	500
18	Ահազանգի գրանցման բլանկ/ՃԿԱԿ/	Չափը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, սևի և սպիտակի լիարժեք կոնտրաստ, տեքստի ընթեռնելիության ապահովում:	հատ	1390
24	Ձենք-զինամթերքի գրանցման մատյան	100 թերթից, չափը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում:	հատ	5
26	Պատվոգիր/ԿՎ/	Չափը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160 գ զանգվածով օֆսեթ թղթով, գունավոր, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Վերևի կենտրոնական հատվածում ՀՀ զինանշանը՝ գույների վառ վերարտադրմամբ: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում :	հատ	800
27	Սպայական վկայական՝ կազմով/ԿՎ/	Չափը՝ 14,5x10սմ ծալված վիճակում, կազմակողերը ստվարաթուղթ՝ 2 մմ հաստությամբ՝ պատված մուգ կարմիր կազմարարական բումվինիլով, կենտրոնադիր հատվածում ջերմադրոշմված ՀՀ ԱԻՆ լոգոյի պատկերը և վկայականի անվանումը ոսկեգույն, փայլուն: Վկայականը ներսի երկու կողմերից, առանձին-առանձին, յուրաքանչյուրի չափը՝ 13,5x 9,4սմ 120գ զանգվածով օֆսեթ թղթով, սոսնձված: Միջուկի ներսի ծալվող հատվածից 2սմ հեռավորությամբ աջակողմյան հատվածի վերևից ներքև անցնում է 0,6 սմ լայնությամբ մուգ կարմիր ժապավեն: Միջուկի չափը՝ 28,5x9,2սմ, տպագրված՝ 1մ2 մակերեսի 160գ զանգվածով օֆսեթ թղթով, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն, հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում, բաց երանգավորված: Էջերի միջնամասում թույլ գունավոր պատկերված ՀՀ ԱԻՆ լոգոն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, գույների լիարժեք կոնտրաստ, տեքստի ընթեռնելիության ապահովում:	հատ	70

***Նմուշներին ծանոթանալու համար զանգահարել ՀՀ ԱԻՆ ՓԾ ԹՆԱ վարչություն 012 31 78 36 կամ 099 01 70 49**

Պատվիրատու

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Կ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող

Դավիթ Քոչարյան ԱՁ
ք. ԵՐԵՎԱՆ. Արգիշտի փ 11/3$_2$, 32բն
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 37488199

_____Դ. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
« 28 » սեպտեմբերի 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/65-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79821200/1	Հրշեջ փրկարարական ջոկատի մեկնումների գրանցման մատյան	-	-	-	-	-	-	-	-	-	25 000	25 000	25 000	25 000
2	79821200/2	Հրդեհների հաշվառման քարտերի գրանցման մատյան	-	-	-	-	-	-	-	-	-	14 000	14 000	14 000	14 000
3	79821200/3	ՀՓՋ և ՀՀՋ ծառայության մատյան	-	-	-	-	-	-	-	-	-	90 000	90 000	90 000	90 000
4	79821200/5	Հրշեջ փրկարարական ավտոմեքենաների տեխսպասարկումների մատյան	-	-	-	-	-	-	-	-	-	22 000	22 000	22 000	22 000
5	79821200/6	Դասամատյաններ	-	-	-	-	-	-	-	-	-	58 000	58 000	58 000	58 000
6	79821200/7	Հրշեջ փրկարարական ջոկատի հեռախոսագրերի մատյան	-	-	-	-	-	-	-	-	-	25 000	25 000	25 000	25 000
7	79821200/8	Հրշեջ փրկարարական ջոկատի ռադիոկապի վիճակի ստուգման մատյան	-	-	-	-	-	-	-	-	-	14 000	14 000	14 000	14 000

11	79821200/14	Ծառայողական ցուցակ/ԿՎ/	-	-	-	-	-	-	-	-	-	17 500	17 500	17 500	17 500
12	79821200/15	Հաշվառման անձնական թերթիկ/ԿՎ/	-	-	-	-	-	-	-	-	-	7 500	7 500	7 500	7 500
15	79821200/18	Թեստի բլանկ/ԿՎ//ՀՀ ԱԻՆ փրկարար. ծառայողների թեստավորման համար/	-	-	-	-	-	-	-	-	-	20 000	20 000	20 000	20 000
18	79821200/22	Ահազանգի գրանցման բլանկ/ՃԿԱԿ/	-	-	-	-	-	-	-	-	-	13 900	13 900	13 900	13 900
26	79821200/30	Պատվոգիր/ԿՎ/	-	-	-	-	-	-	-	-	-	40 000	40 000	40 000	40 000
27	79821200/31	Սպայական վկայական՝ կազմով/ԿՎ/	-	-	-	-	-	-	-	-	-	35 000	35 000	35 000	35 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր բարտուղար՝

_____Ա. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող

Դավիթ Քոչարյան ԱՁ
ք. ԵՐԵՎԱՆ. Արգիշտի փ 11/3շ, 32բն
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 37488199

_____Դ. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«28» սեպտեմբերի 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/65-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 28 » սեպտեմբերի 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/65-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն